***ՄԻՆԱՍՅԱՆ Է. Գ.,*** Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003թթ.), Երևանի համալսարանի հրատ., Ե., 2003, 443 էջ:

Հայաստանի անկախացումով նոր դարաշրջան սկսվեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Վերականգնվեց հայոց անկախ պետականությունը և տոտալիտար սոցիալիզմից անցում կատարվեց կապիտալիզմին: Դրա հետևանքով հայ ժողովրդի կյանքում կատարվեցին հսկայական սոցիալ-տնտեսական վերափոխումներ, որոնց քննության շնորհակալ ու դժվարին գործին ձեռնամուխ է եղել Էդիկ Մինասյանը, տքնաջան աշխատանքով հեղինակելով գրախոսվող աշխատությունը:

Թեև թարմ հետքերով պատմություն գրելը դժվարին գործ է, պարունակում է անխուսափելի սխալներ, սակայն դա չի նշանակում, թե այն չպետք է ձեռնարկել: Ավելին, ժամանակակցի պատմական հետազոտությունն ունի դրական շատ կողմեր: Ընթացիկ երևույթների ու իրադարձությունների ականատեսը հնարավորություն ունի առավել ճիշտ արտացոլելու ժամանակի շունչը և պատմական ոգին: Այդպիսի հետազոտությունն ունի նաև գործնական մեծ արժեք. լուսաբանելով պատմական զարգացման գործընթացը՝ այն ներգործում է նաև նրա հետագա խորացման վրա:

Գիտապատմական ու գործնական առումներով պահանջվում է խորապես վերլուծել և իմաստավորել կատարված վերափոխումները, գրել Երրորդ հանրապետության պատմությունը:

Ինչպես իրավամբ նշում է հեղինակը, առ այսօր հրապարակի վրա չկա մի ամփոփ ուսումնասիրություն, որն ամբողջովին նվիրված լիներ Երրորդ հանրապետության պատմությանը, որտեղ վերհանված ու վերլուծված լինեն սոցիալ-տնտեսական ոլորտի վերափոխումների էությունը, նշանակությունը, այդ բնագավառի զարգացման պատմական փուլերը, առանձնահատկությունները, հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականության հիմնախնդիրները: Այդ բացը զգալիորեն լրացնում է Է. Մինասյանի աշխատությունը: Քանի որ քննվող պատմական ժամանակահատվածը բավական բարդ է, հագեցած իրարամերժ իրադարձություններով, ներքին հակասություններով ու քաղաքական բազմազան ուժերի միջև մղված պայքարով, հետազոտողը պետք է ցուցաբերի խիստ անաչառ մոտեցում, կատարի համակողմանի ու խոր քննական վերլուծություն: Հենց այս մեթոդով է գրված գրախոսվող աշխատությունը: Մենագրության մեջ օգտագործվել են հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հրապարակած նյութերը, բազմաթիվ վիճակագրական ժողովածուներ ու տարեգրքեր, ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունները, հանրապետությունում գործող օրենքների ժողովածուները, կառավարության որոշումների ժողովածուներն ու պաշտոնական տեղեկագրերը, մամուլը: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել

հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական արխիվի (ՀՀ ՀՔԿՓՊԱ) և ՀՀ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվի (ՀՀ ՆՊԿՊԱ) ու բազմաթիվ այլ նյութեր: Հեղինակը հիմնախնդիրը քննել է աշխատության երեք գլուխներում, որոնք ընդգրկում են ամբողջ թեման, նրա բոլոր հարցերը: Նկատենք, որ նա իր առջև խնդիր չի դրել ներկայացնելու Երրորդ հանրապետության ամբողջ պատմությունը, այլ հետազոտել է տեղի ունեցած սոցիալ-տնտեսական վերափոխումները և դրանց ընթացքը: Աշխատության առաջին գլխում լուսաբանվում են նաև Հայաստանի անկախության հռչակումը և պետականության կայացման գործընթացը: Ցույց է տրվում արցախյան շարժման տեղն ու դերն այդ պատմական գործընթացում և թե ինչպես համազգային պայքարի ալիքի վրա ձևավորվեց Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ-ն): Տրվում է այդ շարժման գնահատականը: «Չնայած իր անվանը,- գրում է հեղինակը,- այդ շարժումը չդարձավ իսկական համազգային և չէր էլ կարող դառնալ, որովհետև գործնականում անհնար էր հասարակական բոլոր շերտերի շահերը, մտածումները և ձգտումները միավորել: ՀՀՇ-ն դարձավ հանրապետության բազմաթիվ հասարակական-քաղաքական կազմակերպություններից մեկը (էջ 19)»: Բացահայտելով այդ շարժման էությունը և նպատակները, հեղինակը ճշտորեն նկատում է, որ «հետագայում ՀՀՇ-ն չարաշահում էր ժողովրդական զանգվածների ազատագրության ու անկախության համար պայքարը՝ ձգտելով երկրում հաստատել իր իշխանությունը (էջ 19)»: Այդպես էլ եղավ. արցախյան շարժման ալիքի վրա ՀՀՇ-ն հասավ իշխանության: Սակայն ՀՀՇ-ն իր առաջին քայլերից թույլ տվեց կոպիտ սխալներ՝ ծանր հարված հասցնելով հանրապետության տնտեսությանը:

Այդուհանդերձ, պետականության ստեղծման ուղղությամբ կատարվեցին որոշակի քայլեր, որոնք հանգամանորեն լուսաբանվում են աշխատության մեջ: Սակայն, ցավոք, կառավարման բոլոր օղակներում ընդգրկվեցին կրթական ու մասնագիտական պատրաստություն ու աշխատանքային փորձ չունեցող բազմաթիվ պաշտոնատենչ մարդիկ, որոնք հայրենիքին ու ժողովրդական շահերին ազնվորեն ծառայելու փոխարեն տոգորված էին հանրային ունեցվածքը կողոպտելու միջոցով հարստանալու կրքով: Կառավարման համակարգում տիրապետող դարձան շահամոլությունը, նյութապաշտությունը, ընչաքաղցությունը, գլուխ բարձրացրին նաև այլ բացասական երևույթներ: Երկրի հարստությունները կենտրոնացան հասարակության մի փոքր մասի ձեռքին, իսկ ժողովրդի վիթխարի զանգվածներ սեփականազրկվեցին ու աղքատացան:

Աշխատության երկրորդ գլխում համակողմանի ու խորությամբ լուսաբանվում են հանրապետությունում կատարված տնտեսական վերափոխումները: Նախ, ներկայացվում են շուկայական հարաբերություններին անցնելու առաջին քայլերը: Վարչահրամայական համակարգից շուկայականին անցումը դյուրին չէ: Այն օբյեկտիվ աննպաստ պայմանների ու թույլ տրված սխալների հետևանքով չտվեց ցանկալի արդյունքներ: Մինչև 1994թ.

վերափոխումներն իրականացան տնտեսական անկման պայմաններում: Ինչպես նշում է հեղինակը, օբյեկտիվ պատճառների հետ միասին, սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ թույլ տրվեցին բախտորոշ սխալներ: Դրանցից է ժամանակից շուտ գների ազատականացումը, որը հանգեցրեց սոցիալ-տնտեսական ծանր հետևանքների (էջ 74):

Հայաստանում շուկայական հարաբերություններին անցումը դրսևորեց որոշակի առանձնահատկություններ, որոնց անդրադառնում է հեղինակը: Այստեղ ԱՊՀ-ում առաջինն իրագործվեց հողի սեփականաշնորհումը, որը դարձավ ագրարային վերափոխումների հիմքը: Կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները լուծարվեցին և ձևավորվեցին հազարավոր անհատական տնտեսություններ: Սակայն համաշխարհային փորձը վկայում է, որ գյուղատնտեսության զարգացման կարևոր պայման է խոշոր ֆերմերային տնտեսությունների ստեղծումը: Հայաստանում, փաստորեն, կատարվեց հետընթաց շարժում, որը չէր կարող ցանկալի արդյունք տալ: Աշխատության մեջ հանգամանորեն լուսաբանվում են ագրարային վերափոխումները, որոնք ենթարկվում են քննական վերլուծության, բացահայտվում են խայտառակ ձևով կատարված հողի սեփականաշնորհման ծանր հետեվանքները: Համակողմանի հետազոտությամբ հեղինակը եզրակացրել է, որ ագրարային արմատական վերափոխումների գործընթացը հանրապետությունում կատարվել է ոչ թե գյուղացիների ցանկությունները հաշվի առնելով, այլ՝ վարչահրամայական եղանակով: Անտեսվել են օրինականության ու սոցիալական արդարության սկզբունքները: Հողի սեփականաշնորհումը շատ դեպքերում ծառայեցվում էր առանձին մարդկանց հարստացմանը: Առաջին տարում արդեն ցանված հողա-տարածք ստանալով, գյուղացիները ոգևորվեցին: Բայց կարճ ժամանակ անց, հանդիպելով մեծ դժվարությունների, նրանք հրաժարվեցին մշակել հողային շատ տարածքներ: Գյուղտեխնիկայի բազայի փոշիացումն իր հերթին մեծ հարված հասցրեց գյուղատնտեսական արտադրությանը: Հողը գյուղացուն բաժանելուց հետո պետությունը, փաստորեն, իր գործը համարեց ավարտված ու մի կողմ քաշվեց՝ թողնելով նրան մեն-մենակ իր հոգսերի հետ: Այդ ամենը շատ հստակ ներկայացվում է մենագրության մեջ:

Ինչպես երևում է աշխատության համապատասխան բաժնի շարադրանքից, վերափոխումները ոչ պակաս անհաջող ու խայտառակ ձևով իրականացվեցին նաև արդյունաբերության ոլորտում: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը շրջափակման և այլ պատճառներով հայտնվեց ճգնաժամի մեջ: Նրա մի շարք ճյուղեր դադարեցին գործելուց և 1990-1993թթ. ԱՊՀ-ի երկրներից ամենամեծ անկում ապրեց Հայաստանի արդյունաբերությունը: Թվում էր, թե արդյունաբերական ձեռնարկությունների սեփականաշնորհումը կարող է տնտեսության այդ ճյուղը դուրս բերել ճգնաժամից, սակայն այն չտվեց ցանկալի արդյունք: Սեփականաշնորհման գործընթացը հանրապետությունում իրականացվեց տարերայնորեն, առանց ռազմավարական ծրագրի և անհրաժեշտ հասարակական վերահսկողության: Այդ պատճառով էլ սեփականաշնորհման ընթացքում տեղի

ունեցավ բացահայտ թալան: Սեփականաշնորհմանը ժողովրդի մասնակցության միջոցի՝ այսպես կոչված սերտիֆիկատների (վաուչերների) կիրառումը մնաց սոցիալական արդարության պահպանման պատրանք:

Անհաշիվ են սեփականաշնորհման ծանր հետևանքները, որոնք հանգամանորեն ներկայացվում են աշխատության մեջ: Արդյունաբերական ձեռնարկությունները սեփականաշնորհելիս հոգ չտարվեց ունեցվածքի պահպանման մասին, որի հետևանքով մետաղյա թանկարժեք սարքավորումները ջարդոնի անվան տակ արտահանվեցին: Հիմնական կապիտալի այս վատնումից առանձին մարդիկ յուրացրին մեծ գումարներ, իսկ Հայաստանը զրկվեց ոչ միայն արտադրամիջոցներից, այլև սև ու գունավոր մետաղների պաշարից, որն ինչպես հայտնի է, ռազմավարական հումք է: Դա ծանր հարված հասցրեց արդյունաբերությանն ու ամբողջ տնտեսությանը: Արդյունաբերության ոչնչացման հետ անգործության մատնվեց և, հետևաբար, փոշիացավ նախորդ շրջանում ստեղծված գիտատեխնիկական վիթխարի ներուժը: Պետությունը, փաստորեն, ինքնակամ հեռացավ սեփականաշնորհման գործընթացի կառավարումից: Չարդարացան նաև սեփականաշնորհումից բյուջեի մուտքերն ապահովելու հույսերը: Պետության իրական դրամական եկամուտները սպասածից առնվազն 10 անգամ ցածր ստացվեցին: Այս բոլոր վրիպումները խիստ սահմանափակեցին հանրապետության տնտեսության զարգացման հնարավորությունները: Ձեռնարկությունների արտադրական հիմնական ու շրջանառու միջոցների յուրացումը հասցրեց արդյունաբերության քայքայմանը, գործազրկության աճին ու արտագաղթին: Դրան մեծ չափով նպաստեց նաև էներգետիկ ճգնաժամը, որի ուսումնասիրությանը հատուկ ուշադրություն է դարձրել հեղինակը: Ինչպես ճիշտ նկատում է Է. Մինասյանը, ազգաբնակչության նկատմամբ փաստորեն իրականացվեց էներգետիկ տեռոր, որը ծանր անդրադարձավ բնակչության ոչ միայն տնտեսական պայմանների, այլև բարոյահոգեբանական վիճակի վրա:

Շուկայական էկոնոմիկայի զարգացման կարևոր պայման է ֆինանսավարկային և հարկային ճիշտ քաղաքականությունը, որը հեղինակը լայնորեն լուսաբանել է : Նա ցույց է տվել, որ այդ բնագավառում որոշ բարեփոխումներ են կատարվել: Սակայն այստեղ ևս նկատելի են խոշոր չափերի հասնող վարկերի և բնակչության միջոցների յուրացումներ, որոնք հաճախ հովանավորվում էին բարձրաստիճան իշխանավորների կողմից: Չկարողանալով սեփականաշնորհման միջոցով ապահովել արտադրության զարգացումը՝ պետությունը սկսեց ավելի շատ ուշադրություն դարձնել օրինական ու ապօրինի հարկերով հարկային մեքենայի կատարելագործմանն ու բյուջեի հիմնական մասի համալրմանը: Փաստորեն, պետությունն իր ֆինանսական վիճակը բարելավեց մանր ու միջին արտադրողի հաշվին՝ կամա թե ակամա հովանավորելով ստվերային տնտեսությունն ու նպաստելով բևեռացման սրմանը:

Ուշագրավ է աշխատության այն հատվածը, որտեղ խոսվում է արտահանման և ներմուծման մասին: Ներկայացվում է աղյուսակ, որը հստակ պատկերացում է տալիս Հայաստանի արտաքին առևտրի մասին, ըստ երկրների: Գրախոսվող աշխատության երրորդ գլուխը նվիրված է սոցիալական

քաղաքականությանը, որը նույնպես լուսաբանվում է հանգամանալից, իր բոլոր բաղադրիչներով: Ընդ որում, Է. Մինասյանը հատուկ շեշտում է այն մեծ տարբերությունը, որ այդ հարցում կար նախորդ և նոր ժամանակաշրջանների միջև: Սոցիալական բնագավառում ևս չձևավորվեցին հասարակության (հատկապես անաշխատունակ և սակավազոր խավերի) շահերը պաշտպանելու մեխանիզմներ: Իրականացվող սոցիալական բարեփոխումները չնպաստեցին բնակչության հիմնական կենսախնդիրների լուծմանը: Հեղինակը տվել է Հայաստանի նոր իշխանությունների սոցիալական քաղաքականության ճշմարիտ գնահատականը, որը հիմնավորվում է փաստական հարուստ նյութով: Հեղինակի համոզմամբ, պետության անճարակության հետևանքով է, որ 1990-2001թթ. Հայաստանից հեռացել է 1,3 մլն մարդ, ինչը բացասաբար է անդրադառնում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա (էջ 233):

Անկախացումից հետո սոցիալ-տնտեսական ճգնաժամը քայքայիչ ազդեցություն ունեցավ նաև առողջապահական և գիտակրթական բնագավառներում: Պետական հարկատուների տարեցտարի նվազումը, վճարովի սպասարկումները հասարակության աղքատ մեծամասնությանը զրկեցին այդ բնագավառներից օգտվելու հնարավորությունից: Դա բացասաբար ազդեց նաև գիտական ու գիտակրթական հիմնարկների գործունեության վրա:

Վերջում հեղինակը եզրակացնում է. «Հայաստանի Հանրապետության ավելի քան տասնամյա պատմության ուսումնասիրության փորձը ցույց է տալիս, որ անցման շրջանի դժվարությունները կարող էին այդքան խորն ու ավերիչ չլինել, եթե իշխանությունները վարեին գիտականորեն հիմնավորված սոցիալ-տնտեսական քաղաքականություն, հաշվի առնելով հանրապետության առանձնահատկությունները… Այդ ամենով հանդերձ տնտեսության փլուզման կասեցումը, երկրի պաշտպանականության ամրապնդումը, հասարակական-քաղաքական կյանքի զարգացման և այլ բնագավառներում ձեռքբերումները վկայում են անկախության ուղին որդեգրած ժողովրդի անսպառ հնարավորությունների մասին» (էջ 235):

Աշխատության երկրորդ մասում, հավելվածի կարգով, ներկայացվում են հանրապետությունում ընդունված օրենքներն ու պետական որոշումները, որոնց հիման վրա այն գրված է: Դրանից գրախոսվող աշխատությունն ավելի է շահել:

Ամփոփելով նշենք, որ գործ ունենք լուրջ գիտական աշխատության հետ, որը նշանակալի ներդրում է հայ պատմագիտության մեջ:

**ԱՄԻՐՅԱՆ Ս. Ս.**
Պատմական գիտությունների դոկտոր